

# ՍԻՈՆ



Ս · ՑԱԿՈՒԹՅԱՆՑ ՎԱՐ ՏԱՅՈՑ ՅԵՐՈԽՈՎԱՆԵԱ

«سيون»، مجلة ارمنية شهرية، دينية، أدبية، ثقافية، للغة والبيان.  
"SION" an Armenian Monthly of Religion, Literature and Philology

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

---

Ծնորհաւորական զիր՝ Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետքն Կոչ Հայ ժողովուրդին որ ի սփյուռ աշխարհի	ՎԱԶԳԵՆ Ա. ԿԱՅՈՂԻՆՈՅ	97	
<b>ԽՄՐԱԿՐԱԿՈՆ</b>		98	
— «Քրիստո յարեաւ ի մեռելոց»		100	
<b>ԿՐՈՆԱԿԱՆ</b>			
— Յիսուս ինչո՞ւ չաշարուեցաւ խաչին վրայ	Գ.Ր. Ա. ՍԱՐՈՎԵԱՆ	102	
— Պայքար եւ յաղբանակ	ԳԵՈՐԳ Ս. ՃԵՆԻԳԻՉՅԱՆ	105	
<b>ԲԱԼԱՌԵՋԱԿՈՆ</b>			
— Տերեւներ բոցին դեմ	ԵԳԻԵՎԱՐԻ	108	
— Գերսեմանի՛	ՀՄԱՑԵԱԿ ԳՐԱՆՈՒՅՆ	110	
— Հայոց լոյսի փառոս	Մ. Դ. ՅԱՐԱՒԹԻՒՆՅԱՆ	111	
ՀԱՆՈՎԻԿԱԿԱՆ Կարողիկ նկեղեցւոյ զերազօյն նիգը		ՅՈՎՈԵՓ ՎՐԻ. ՄՈԱՄՈՒՐ	112
<b>ԲԱՆԱՍԻՐԱԿՈՆ</b>			
— Առար Սեբաստացի	Ն. ԵՊՈ. ՄՈՎՈՒԿԱՆ	116	
<b>ՀԱՅԿԱԿՈՆ ՎԱՆՔԵՐ</b>			
— Հոռոմոսի Վանք	Հ Հ Հ	118	
Ծնորհաւորական գրուրիւններ եւ հեռազիւններ			120
<b>Ա. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ</b>			
— Նկեղեցականք-Բեմուկանի	122		
— Պատոսնականի	124		
— Ա. Զատկի ուխտուարուրիւնը	125		
— Կոմիտասեան Երջախումբը Եռևանդեմի մեջ	125		
Հ. Բ. Ը. Միուրեան խօսքը Փարիզի պառակտիչ շարժումին մասին (Շարունակելի)		125	

---

ՄԻՈՆ -ի Տարեկան Բամբեզինն է,  
բոլոր երկիրներու համար, Անգլ. Շիլին 20

Redaction of the Armenian Monthly SION

, Armenian Patriarchate,

P. O. B. 4001

Old City - Jerusalem (Jordan)

# ՍԻՐՈՒ

Լ. Տ. ՏՈՐԻ - ՆՈՐ ՇՐՋԱՆ

1963

◀ Ապրիլ ▶

Թիւ 4

ԽԱՅԱՎԱԾԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ

ԵՒ

Կ. Ա. Թ. Ո. Դ. Բ. Հ. Ո. Ս.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ապրիլ 1963

Ս. ԷՇԽԱՄՏԻՆ

Ս. ՄԵՇՈՎԱՏԻ Տ. ԵԳԻՆԵ Ա. Բ. ՔԵՎԻՍԿԱՊՈՍ ՏԵՐՏԵՐԵԱՆԻՆ,  
ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀՈ. 808 ՄՐԵՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ,

Ա. ԵՐՈՒՍԱՂԵՄ

«Երիսոս յանեաւ ի մեռելոց»:

Սուրբ Էջմիածնէն, ուրախ առող Զեզի աւետիր կը բերեմ մեր Փրկչի  
հրաշափառ Յարութեան, չեմազին մաղքանով որ Սուրբ Գերեզմանէն հա-  
ռապայրող լոյսը հզօր ու յաղքական ըովայ ամբողջ աշխարհի վրայ և բոլոր  
մարդոց սրբելն ներա, ի պայտորումն և ծաղկումն աւետարանական սիրոյ  
և խաղաղութեան պատշաճներոն, որոնց համար ինքը Արդին Ասուծոյ՝ Յի-  
սոս, Գոյգորա բարձրացաւ և Եր մահով՝ մահը յաղթեց, որպէսի մարդիկ  
աւելի կիսանի ոննեան, և օրպէսի այդ կիսանի ըլլայ աւելի բարի, աւելի  
արդար ու աւելի երշանիկի:

Մեր հոգին լեցուն այս լոյս ուրախութեամբ, կ'աղօթեմ Զեր ժիւախնամ  
քայլի եկեղեցիներու պայծառութեան և համայն հաւատացեալ Մեր զաւակ-  
ներուն արեւատութեան և անօնց առաջինի ու ազգանուն զործոց յաջո-  
ղութեան համար:

Նաև ողջոյն և օհնութիւն Զեր Ամենապատութեան, Արքոց Յա-  
կոբեանց Միստրանութեան զերաւորն և հոգեւորն հայրեան, Տիուեն Ժո-  
ղովոյ յարզարժան անդամներոն, դպրաց դասերոն, Զեր վարժարաններոն  
և կրտական մատուցուն եկեղեցաւէ կազմակերպութեանց աստուածաւէր  
անդամներոն, որոնց Զեր ընրաց համախումբ, չէն և անսառան կը պահեն  
Սուրբ Արքոց, Զեր բարեխանաւ եւերի նիւթբնկալ ափերուն վրայ:

Յարուցեալ Փրկչի սուրբ և անմահ զօրութիւնը քող Զեզ բոլորդ պահէ  
պահպանէ ամբողջ ու անխոռով, սիրով միարան, որպէս որդիք լուսոյ և  
ժողովորոյն Երկինից արքայութեան, զի համարտապէս «յանեաւ Երիսոս» և  
«յարութեամբն իւրով մեզ զիշանս պարզենաց»:

Օհնութեամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԽԱՅԱՎԱԾԻ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿՈԹՈՒՆԱՆ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽԵԲ

Հայոցպետական

## ԿՈՉ ՀԱՅ ՃՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՈՐ Ի ՍՓԻՒՌՍ ԱՇԽԱՐՀԻ

Արտասահմանի հայ կեամբը բազում տարիներէ ի վեր ալեկոծուած կատառողչ հակամատարի թիմեներով ու զոյտքան խմառէ զուրկ ուռու հացերով, որոնք երբեմն կը հանգին քենամական արարքներու և նոյնիսկ եղայրապահութեան:

Եւ ահա, մինչ Առոր Զատկի օրերուն, Մենք, Փրկչի եջման Առոր Անդամի առաջ կ'ալորէինք վասն խաղաղութեան և մխանութեան մեր Եկեղիքին ու մեր ազգին, չարայէս նոր դեպք մը եկաւ ցնցելու Մեր խիսիք, համայն հայութեան խիսիք:

Դամասկոսի Հոգեւոր առաջնորդ Գերաքնորհ Շառաւ Եպիսկոպոս մահափորձի ենթակուեցաւ հայ մարդոց ձեռնով, ու ծանրօքէն պիտառուուած, այս պահուս կը մահանի մահուան դէմ:

Ենչպէ՞ս է որ հնարաւոր կը դառնան նման արարքներ եւ ո՞ւր կ'ուզեն հասցնել ուստի հայ սփիւրքը այս ընթացքով: Ո՞ւր է հայութեան սիրը, ո՞ւր է հայկական արժանապատութեան զզացումը, ո՞ւր է յազգանքը դէպի Առոր Եկեղեցին ու անոր բարձրաստիճան սպասարքները:

Մենք զառնօրէն կ'ողբան ու կը զատապարտենի սոյն անպատճառ արարքը ու սեւ մուր կը խէ Հայ ժողովուրդի պայծառ հակատին: Բառական է աղես: Խնայեցէք Հայ ժողովուրդին, խնայեցէք Հայ Եկեղեցին:

Մենք խորապէս վըսահար, Առոր Էջմիածնին կոչ կ'ուղենի սփիւրքի Մեր բոլոր զաւակներուն անխայիր, բոլոր անոնց ու հայու անունը կը կրեն, բոլոր մեր Նորիապետական Արքուներուն, թեմերուն և Եկեղեցական համայնքներուն, բոլոր հայ կազմակերպութիւններուն ու Հայ Մամուլին, ու պէսզի իրենց խոնի արդար ձայնը բնելի դարձնեն ու հայ կեամբէն ներս այնու վերջնապէս արմատախիլ բլլան նման բարքարու կիրեն, որոնք բնու երի արտայայտութիւններ չեն բուն հայ ժողովուրդի նոզիին:

Արդէն խակ խոռվախոյզ այս աշխարհին վրայ, հիւրընկալ ժողովուրդներու ծոցին մէջ, հայ ազգի զաւակները պարտին ապրիլ իրեն օրինապահ խաղաղասէր բաղամացիներ, համախմբուած իրենց կրօնական ու մշակութային հատակութիւններու ուրբաջ, առանց աղմուշի, առանց անկարգութիւններու, առանց իրենց վրայ երանիրելու ասպեքտական Երկիրներու դժոնիունը:

Անցեալ բազում ողբերգութիւններէն ու փորձանիններէն յետոյ, սպասեին, ու արտասահմանի Մեր ժողովուրդը զառնայ աւելի ըշահայեաց, աւելի



նեռաւես, աւելի ճաւասարակըուուած իր ապրումներուն եւ իր գործունեուութեան մէջ, եւ բոյլ չտայ որ իր ծոցին մէջ կատարուին կուսակցական պայմանի աղիւաբեր ծայրայեղ արտայայտութիւններ :

Խաղաղութիւն, սէր եւ միութիւն ազգիս հայոց, ահա Մեր աղօքքը, ահա Մեր պատգամը : Փրկարար ու ժինարար պատգամ՝ որ նին դարերէն մեզի կուզայ ուսպէս գերազոյն խաստութիւն եւ որ մեր օրերուն կը դառնայ առանել այժմէական ու հրամայական, ներաւոր ափերու վրայ ցիրուցան ապրոլ Մեր պանդուխ զաւակներուն համար :

Այս չէ<sup>\*</sup> արդիօֆ նաև պատգամը մեր բիւրաւոր նահատակներուն, որոնի մասնաւոնդ այս ապրիլեան օրերուն, իրենց անյայս գերեզմաններէն կ'աղօքեն վերածնած հայ ժողովով զաւակներուն միասնութեան ու խաղաղ, համերաշխ կեանիքին համար, ի խնդիր մեր Եկեղեցւոյ ու ազգի գերազոյն առներուն :

Հառացելք հարազատներ Մեր «Երէ սիրեցուր զմիմեան» Ս.Ա.Տուած ի մեզ բնակի եւ սէր նորա ի մեզ կատարեալ է» (Ա. Յովին. Պ. 12):

Ա. Եկիլի լոյս, աւելի սէր եւ աւելի խաղաղութիւն հայոց հոգիներուն, հայոց սրբերուն : Եւ բոլորին, բոլորին անխսիր օրհնութիւն աստուածային՝ ամենայն հայոց Մայր Ա.քոռ յաւերժական Սուրբ Էջմիածնէն : Ա.մէն :

## ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ

Ծայրազոյն Պատրիարք և Կարողիկոս  
Ա.մենայն Հայոց

25 Ապրիլ 1963 թ.

Ա. Էջմիածին

ԳԵՐԱԳՈՅՆ  
ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՃՈՒՐԴ



## ԽՄԲԵԳՐԸԿԵՐ

### «ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՐ Ի ՄԵՌԵԼՈՅ»

Զատիկը ծաղկուծ օրն է տարւոյն և կարմիր յօյսն ու խռոտումը աղջային։ Ասմաք նոյնիսկ, որոնք չունին ստոյդ հաւատքը Յիսուսի Յարութեան որոնց մատածումը, թովմասին հետ, չօշափելիէն և դրական փաստէն անք չ'անցնիր, կը լեցուին անանուն զգացումով մը երբ Զատիկի տռաւօաը ծաղկերի վրայ։ Այդ զգացումը սփոփտարար ինչ մը աւնի, որովհետեւ անոր մը կեռնքի զեզեցկութիւնը և Աստւծոյ ուրբը կ'ապացուցուին ա'յնքան զեզեցկութիւնը։

Յարութեամբ մարդկութեան եղած խռոտումը կ'ապացուցանէ թէ շրունակուող կեռնքը, որ պիտի անցնի մահուան փորձառութենէն, կրնայ շրունակուիլ մահէն անդին, որովհետեւ Քրիստոս իր մահովը յաղթեած է մահուան Յարութիւնը այս կերպով կը բանայ մեզի կեռնքի նոր հորիզոն մը, օժանեածարգը նոր նկարազրուի։ Պէտք չէ երկմասիլ անոր ճշմարտութեան, վասնդի անոր վկաները դիերախաք մարդեր չէին, անոնք զիյն տեսնելէ, չօշափելէ և Անո հետ խօսակցիկէ վերջն ալ տակաւին կը թերահաւատէին։ «և ոմանք երկուացան»։

Այսօր սակայն մեզմէ շատերուս համար տեսանելիէն և չօշափելիէն անզին զոյսւթիւն ունի։ Թովմասականութիւնը, այսինքն իրազութիւնները զիտական և սկեպտիկ ակնացներով միայն զիտելու և զատելու արարքը, համատած համեմատութիւններու հասած է, և մեծ է թիւը անսնց՝ որոնք թովմասի հետ կը կրկնեն ամէն օր, թէ մինչեւ օր չչօշափենք իր վերքերը, չնոք հաւատար։

Թովմասի հաւատքը մթագնած էր այն խաւարին մէջ՝ որ իջած էր Գոդայէն։ Խաչի գայթեկութենէն վերջ, շատ գժուար էր իրեն հաւատալ Յարութեան։ Թովմաս չէր ուզեր հաւատալ նոյնիսկ իր աշքերուն, որոնք կրնային շահաւալ և խարուիլ։ կ'ուզէր չօշափել իր Վարդապետին վերքերը։ իր մատածումը կը վազէր մարմնական փորձին, անբան և վայրենի ապացոյցին, չհաւատալու չափ մարի և հոգիի լոյսին։

Մարդեր կան, որոնց մէջ զգացումը զօրաւոր է, աւելի կը զգան, կը տպաւորուին, քան թէ կը խորին։ Բոսւածը դիւրին ընդունովներ են առնեք, պարզ ու երջանիկ։ Կայ ուրիշ դասակարգ մը մարդոց, որոնք չօշափելի ապացոյցներ կ'ուզէն ամէն բանի։ Երջանիկ չեն առնք, վասնդի հողեկան իրողութիւնները բիշ անզամ փորձի ներքեւ կրնան իշնալ։

Բոլոր սկեպտիկները, զաղջ հոգիները, իմաստուկներն ու չնականները, զիտութեան ոչիլները, բաղերը, որոնք զերծ են արձիւներու սրատեսութենէն ու թոփչքէն, իրենց փաստաբանը ընտրած են թովմասը։ Բայց Յիսուս կուտայ իր զեզեցկազոյն և վերջին երանին անսնց՝ որոնք չտեսած կը հաւատան։ Վասնդի մեծ ճշմարտութիւնները, բացառիկ արժէքները միշտ ի հեծուկո զիտակներու են և ընսութեան ներքի չեն իյնար։ Ճշմարտութիւններ՝ որոնք վերջն կու զան և թափ կ'անցնին հոգիներէն, առանց նիւթի միջնորդութեան։

թովմաս սուրբ մընէ, բայց չկրցաւ արժանանալ այս վերջի երանութեան։ Հին զբոյց մը կը պատմէ թէ իր կեանքը մնաց մինչև ի մահ արիւնի կորիրութեամբ։ Վասնզի անհաւասութիւնը մեծաղոյն մարդառապանութիւնն է։ Այսօր աշխարհը լի է անսոնցմով, որոնք սպաննած են իրենց հողին։ Մասգործակը բոլոր աշխարհներու, որոնց սիրար փակ է երկնային իրողութիւններու լոյսին առջեւ։

Հին աշխարհի համար, մարդք միայն մտածումով կրնար Աստուծոյ անմանութեան մասնակից բլատ, այսպիս անմանութիւն մը խզումն է նիւթին և հողին։ Հին հասկացողութեամբ, մարդուն և Աստուծոյ, նիւթին և հողին ճառկատողիրները բաժնուած էին։ Յիսուսի Յարութեամբ՝ անսոնք կը միանային, որովհետեւ Քրիստոսի Յարութիւնը մահուածն վրայ տարուած յաղթանակն է։

Զատիկը ոչ միայն անվախճան յափանսականութիւն մը կը բանայ մեր առջեւ, այլ նուև կը լիցնէ մեզ զօրութեամբը Յարութեան, հազնելով նոր նկարազմիր։ Մեռելներէն Յարութիւնը յայտնութիւնը չէ միայն մարդկային անմանութեան, մարդիկ անձանօթ չին անոր, այլ ներկայ և տպազայ կեանքերու միութեան և մարդուն վերանորոգման Որով յարութիւն առնելը, Աւետարանի ողիով կը նշանակի ոչ միայն վերակենցազիլ, այսինքն նորէն շարունակել մահով ընդհատուած զոյութիւն մը, այլ վերապըլ տւելի հզօր և պայծառ և արդիւնական կեանքի կեանքը մը, նման ատոք ցորենահատին, որ իյնալով հողին մէջ՝ կը մերկանաց իր անհատական միութիւնն ու կեանքը պահպանող պատեանէն, ծնունդ տալու համար քանակով ու որակով յաւէտ բաղմապատկուած ու բազմապատկելի ցորենահատին։

Քրիստոս մեռաւ մարդկորէն, այսինքն գագրեցաւ պահ մը ունենալէ իր մարդկային անհատական զոյութիւնը, յետոյ կրկին ունենալու համար զայն և աւելի հզօր իրագործամամբ արդիւնաւորելու աստուածային զօրութիւնն ու սէրը իր Եկեղեցիի կեանքը իւ բովանդակ քրիստոնէութեան պատմութեան մէջ, ծնունդ տալու բարոյական և ընկերային նոր դրութեան մը, որ, իրու ստեղծագործական նոր կարգ մը, ամենէն միծ, բարի և ազնիւ քայլաքակրթութիւնը պիտի ըերէր աշխարհի, մարդկութիւնը տաժանքներու ճամրէն, բայց սիրոյ և քաջութեան հոգիով, առաջնորդելու համար իր ճակատազրի լրումին։

Կը հաւատանք Յիսուսի Յարութեան ոչ միայն որովհետեւ զիտենք թէ զաղափարը չի մեսնիր, թէ սէրը անմահ է, այլ որովհետեւ կը զզանք զինքը ամէն օր իր Եկեղեցիին մէջ կենդանի։ Քրիստոս սրուն յաւերժական ներկայութիւնը ունի Եկեղեցին իր մէջ, իտէական զոյութիւն մը չէ կամ մարդկային տեսակ մը զաղափարատիպ, զոր իւրաքանչ'ուր սերունդ ստէտ կը ստեղծէ իր մտքին մէջ, անոր փոխ տալով լեզուն իր սեփական ներշնչումներուն։ Եկեղեցին ողեկոչած և զգացած Քրիստոսը Աւետարաններու կենդանի փրկիչն է, որուն համար պիտի կրնայինք ըսել Առաքեալին հետ, թէկ չենք ճանչնար զինքը ըստ մարմենյ, բայց կը ճանչնանք ըստ հոգւոյ։

Յարութիւնը ուրեմն ուժն է խոտացած անմահութեան, անճնանորոգման, և Քրիստոսի յաւերժական ներկայութեան։ Յիսուսի Յարութիւնը մահուած վրայ տարուած յաղթանակ մը ըլլալով հանգերձ, է նաև երկնայնացումը աշխարհին և աստուածացումը մարդուն։ Մարդուն ապազայ կատարեալ և լիալիր

## ԿՐՈՆԱԿԱՆ

### ՅԻՍՈՒԽ ԻՆՉՈՒ ԶԱՐՉԱՐՈՒԵՑԱՒ ԽԱԶԻՆ ՎՐԱՅ

•

«Զի այնպէս սիրեաց Աստուած զաւարե՞մ մինչեւ զմերին իւր Միածին էս. զի ամենայն որ հաւատալ ի նա՞մ՝ մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեան յաւիտենակուն» :

Այս խօսքը արձանագրուած է Յովհանն Առաքելականի Գլուխի 16րդ համարին մէջ։ Կշիռին մէկ կողմը եթէ չորս Աւետարանները դնենք և միւս կողմը այս համարը՝ անիկա իր պարունակութեամբը առնոնց համահաւասար կու գայ։ Այս իսկ պատճառաւ, Ա. Քրոց ուսուցիչներէն ումանք այս համարը Աւետարանին մէջ փոքր Աւետարան մը կոչած են։ Որովհետեւ եթէ Աւետարանը կորսուած ըլլար, այս միակ համարը կրնար մեզի տալ անոր ամբողջ բովանդակութիւնը։

Յիսուս ինչո՞ւ չարչարուեցաւ Գողգոթայի խաչին վրայ՝ Վերոյիշեալ համարը կու տայ ասոր պատասխանը իր խորախորհուրդ ու իմաստալից պարունակութեամբը։

Ա. - Յիսուս չարչարուեցաւ խաչին վրայ Ասունոյ սերը մարդկութեան ծանօթացնելու համար. — «Ասունուած սէր էս, և սէր ըլլալուն համար է որ ստեղծած է այս աշ-

խարհը և ստեղծած է նաև մարդը՝ որ բնակի Բր սիրոյն մէջ։ Ամբողջ տիեզերքը կը յայտարարէ մեզի միշտ այս սէրը։ Երբ ամէն առաւ արեգակը կը ծաղի, անոր պլանցաղ ոսկի ճառագալթները Աստուծոյ սէրը կը պատմին։ Երբ բուրաստանի մը մէջ վարդ մը իր անոյշ բուրմանքով հանելի մթնոլորտ մը կը ստեղծէ, առավ բնութեան Արարչին սէրը կը ժառարանուի։ Երբ թըսչ չուն մը վերը՝ օգին մէջ ներդաշնակ դայլայիկներ կը յօրինէ, անոր երգած ամէն մէկ եղանակը Աստուծոյ սէրը մեզի կը ծանուցանէ։

Նոյնպէս երբ մարդ մը՝ որ իր Արարչին պատկերը կը կրէ, իր վսեմ արարքներովը իր չուրջը բարիք կը սփոէ, Աստուծոյ սիրոյն արտայայտիչը կ'ըլլայ։ Ասով տիեզերքի Արարչին սէրը կը յայտնուի մարդկութեան։ Բայց Յիսուսի անձին մէջ Աստուծոյ սիրոյն յայտնութիւնը իր կատարելութեան հասած է։ Անոր համար որ Յիսուս Աստուծոյ սիրոյն կատարեալ մարմացումն էր, որը ի յայտ եկաւ Անոր բոլոր խօսքից ուն և արարքներուն մէջ։

Գողգոթայի խաչը ուսափ ուրիշ բան չէ՝ բայց եթէ Աստուծոյ սիրոյն յայտնութիւնը մարդկութեան։ Յիսուսի ամբողջ կեանքը արդէն սիրոյ յայտնութիւնն էր. ստիպյ Գողգոթայի խաչը այդ յայտնութեան զարթնակէտը եղաւ։

Երկնային ձեռք մը եթէ աստղերը իրարու քով շարելով երկնակամարին վրայ գրած ըլլար թէ Աստուծ սէր էս, մարդոց

կեանքին վրայ այս վստահ մտածումը զմեզ կը տողորէ մեր ապագային պատրաստութեան խորհուրդով և անոր հաստատութեան կամքով։

Յիսուսի Յարութիւնը այլաբանութիւն մը չէ, այլ իրականութիւն մը որ պատռած է այլևս մահուան վարագոյքը և միացուցած իրարու ընդմիշտ կեանքը անմահութեան և ժամանակաւորը անժամանակին։ Յիսուսոսի ճշմարիտ Յարութիւնը իր Եկեղեցին է, անոր կազմաւորած քրիստոնէական կեանքը և անկէ ծնած տիեզերական քաղաքակրթութիւնը։

Աերմանուած ու վերընձիւղած ցորենահատն է Քրիստոս՝ իրը հաւատք և կեանք, որ դարերէ ի վեր կ'աճի և կը զարգանայ իր Եկեղեցիով, պարզուած գերեզմանի խորհուրդին մէջ։

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։

ԽՄԲ.

սրբերուն վրայ թերեա այնքան խոր ազադացութիւն չթողուր՝ որքան թողուց խոչին վրայ Յիսուսի անձին մէջ զարծնականապէս Աստուծոյ մարդոց յայտնած սէրը:

թ. — Յիսուս չաշարուեցաւ խաչին վրայ մարդիւրեան հանգեց իր ունեցած սիրոյն համար. — Մայր մը ինչո՞ւ կը տառապի իր ընտանիքին հանգիւոտ ապահովելու համար ընտանիքի մը մէջ երբ գաւակ մը հիւ անզանայ մայրը իր անձը կը մասնայ և խոկոյն, զիշերը ցերեկի խոսնած. իր բարոր ոչերը կը տրամադրէ անոր հիւանդութիւնը բուժելու նպատակաւ Ինչո՞ւ, քանզի սէրը կը ստիպէ զինքը որ այնպէս ընէ: Հայրենասէր մը ինչո՞ւ կը մտահագութ իր հայրենիքի ցաւերուն համար, այդ ցաւերը իր անձնական ցաւերը նկատելով և իր հայրենիքի կարօտութիւնները իր անձնական կարօտութիւնները համարելով: Եւ, եթէ հարկը պահանջէ, իր անձը կը զոհէ նաև իր հայրենիքին պաշտպանութեանը համար: Արդին կը սիրէ իր հայրենիքը, սէրը կը ստիպէ զինքը որ այնպէս ընէ: Արիշ կերպ չի կրնար ընել:

Նմանապէս նոյն կարեկից սէրն է որ կը ստիպէ զիլիսու կամտաւորապէս և թէ փոխանորգարար չարչարուելու մարդոց մեղքերուն համար, որպէսզի մարդկութիւնը աւելի վսիմ և աւելի բարձր ապրելուրեապի մը առաջնորդուի և փրկութեան երկնային և ամենատանչալի չնորդներուն արժանանայ:

Սէրը երկու տեսակ է, կեղծ և իրական: Կեղծ սէրը չի գտանանար, չի զոհեր, չի չարչարուիր, այլ իր յետին նպատակները և ակնկալութիւնները միայն կը հետապնդէ: Բայց իրական սէրը, լաւ ես է լսել առառածային սէրը, տառապանքներուն մէջ է որ իր արտայայտութեան գոզաթիւնակետին կը հասնի: Քրիստոնէ առաջ ուրիշ կրօններ չկրցան յայտնաբերել առառածային այս խորունկ ու մաքուր սէրը: Իսկ երբ Քրիստոս աշխարհ եկաւ, իր անձին մէջ յայտնեցաւ այս սէրը հանդէայ համայն մարդկութեան, առանց ցեղի ու գտակարգի խորութեան:

Յիսուս կ'ըսէ: «Ես եկայ որ իհանի ունենան եւ ա'լ աւելի ունենան: Յիսուսի աշխարհ բերած այս ճախ ու յաւիտենական կեանքը՝ որը ամէն մէկ քրիստոնեայ հաւատացեալի ժառանգն է, աստուծածային սիրոյ կեանքին է: Այս կեանքին է աստուծային մը հասնէ, որքան ամրան արեւու կիցիչ ձառապայթիւններուն գէմ ինքինքը կը պաշտպանէ, և ձմրան ցուրտին ու իր կեանքին սպասնացող բնութեան ուժերուն կը զիմազրէ ու կը տառապի:

տառապող սէրն է: Քրիստոնէ աթեան մեծ առաքեալը այս սիրոյն բնոյթը կը նկարազրէ հետեւալ բաներով. «Ուրը երկայնամիտ է, խոյց է, չի նախանձիր, չի գուռզանար, չի նպարտանար, անվայիլ վարժութեան չ'ունենար, իշենը չի փետաեր, բարեկան չի գրգռուիր, չարուրիս չի խորհիր, անիրաւուրեան խնդրակից կ'ըլլայ: Անեն բանի կը հոււտայ, անեն բանի կը յուսայ, անեն բանի կը զիջանի, անեն բանի կը նամբեւես: Յիսուս է որ աշխարհն բերաւ առառածային այս մաքուր սէրը, ապրեցաւ զայն, քարոզեց, և ապա Գողգոթայի խոչին վրայ ալ զարծնականապէս յայտնեց զայն մարդկութեան:

Դ. — Յիսուս չաշարուեցաւ խաչին վրայ իր փրկազործուրեան պատօնը ի կատա հանելու համար. — Փրկազործութեան հրմանաբարը Աստուծոյ այս զոհարերոց ու տառապող սէրն է: Բնութեան մէջ ինչ յառաջդիմութիւն որ տեղի ունեցած է՝ տառապանքներու արդիւնքն է: Ասիկա տիեզերքի անհեղի օրէնքն է:

Տառապանքն ալ սակայն երկու տեսակ է, անձնական և այլասիրական: Անձնական տառապանքը կեանքի բնոյթէն, մէջազայրի ու կեանքի պայմաններէն կը բզիսի, իսկ այլասիրական տառապանքը կամաւոր զոհազութեան ու ծառայութեան արդիւնքն է: Յիսուսի տառապանքը և կամ խաչին վրայ իր կրած չարչարանքը ապասիրական է, այսինքն՝ ուրիշներու զերելքին, երջանեկութեան ու քրկութեան համար կամաւոր պատկար ըլլալու համար կամտաւորապէս տառապիչ անհրաժեշտ է: Բնութիւնը լեցուն է ասոր օրինակներով:

Դիմու' բուրաստանի մը մէջ աճող վարդի թուփը, մինչև որ մարդոց ուրախութիւն պատճառապ գեղատեսիլ ու բուրումնաւեւ գորգ մը հասցնէ, որքան ամրան արեւու կիցիչ ձառապայթիւններուն գէմ ինքինքը կը պաշտպանէ, և ձմրան ցուրտին ու իր կեանքին սպասնացող բնութեան ուժերուն կը զիմազրէ ու կը տառապի:

Դիմու' ծառ մը մինչև որ մարդոց քիմքը անուշցնող քաղցրահամ պատուղ մը հասցնէ, որքան չարչարանքներ կը կրէ և կը պարքարի բնութեան դէմ:

Դիտէ՛ մօր մը հնդարկուած տարապայման զոհողութիւնները . մինչև որ մանուկ մը տայ աշխարհի, որքա՞ն երկունք կը քաշէ, կը տառապի ու կը զոհաբերուի, և նոյնիսկ երբեմն այ իր կիանքը վրայ կու տայ: Յորինի հատիկ մը մինչև որ չմեռնի, ըստ Աւետարանական բացատրութեան, չի կրնար նորանոր հատիկներու ծնունդ տալ:

Յառաջդիմութիւնը և կամ վերելքը բնութեան նպատակակէտն է, իսկ այլասիրութիւնը՝ յառաջդիմութիւնն նշանաբանը: Եթէ այլասիրութիւն տեղի չունենայ, այ խօսքով՝ եթէ ուրիշներու երջանկութեան համար կամաւոր զոհողութիւններ յանձն չառնուին, յառաջդիմութիւնը կը դադրի, և եթէ յառաջդիմութիւնը դադրի՝ բնութեան մէջ կեանքը կը վերջանայ: Աւսորի, ինչպէս Յիսուս մեզի համար զոհած է, մենք այ պարտինք ուրիշներուն վերելքին համար կամաւորապէս զոհել, որպէսզի աշխարհը աւելի լաւ աշխարհ մը ըլլայ: Ասիկա Աստուծոյ այս ընդարձակածաւալ տիեզերքին հիմնական օրէնքն է:

Մովսէս Խորայէլի ժողովուրդին ազատարար եղաւ երբ քալեց այս ճամբայէն: Մըրազան Մատեանը այսպէս կը վկայէ իր մասին: «Մովսէս երբ մեծաւ, շրնդունեց Փորաւոնի աղջկան որդի կոչուիլ: Քանի աւելի աղեկ սեպեց Աստուծոյ ժողովուրդին (իր ազգին) նես շարչարուիլ, քան թէ մեղին ժամանակաւոր զուարնուրիւնը վայելի, եւ աւելի մեծ հարսուրիւն սեպեց Քրիստոսի նախատինքը՝ քան թէ նվիպոսի զանձերը» (Երր. Ժ. 24-25): Աչ միայն իր ժողովուրդը եզիպտոսի զերութենէն ազատագրեց, այլև քառասուն տարի անապատին մէջ իր ժողովուրդին նես եւ իր ժողովուրդին համար շարչարուեցաւ և որով անոնց վերելքին ու երջանկութեան պատճառ եղաւ: Իր ազգասիրութիւնը և աստուծածսիրութիւնը ստիպեցին զինքը այսպէս ընել, ուրիշ կերպ չէր կրնար ընել: Աէրը՝ իրական սէրը կը տառապի ու կը չարչարուի այսպէս, և այս տառապող սիրոյն մէջ է որ Աստուծած կը փառաւորուի և կը յայտնուի մարդոց:

Երբ Աստուծած Գոզգոթայի խաչին վրայ Յիսուսի կրած չարչարանքներուն մէջ իր փրկարար, զոհաբերող ու տառապող սէրը յայտնեց մարդկութեան, այդ օրը կրօնից պատճութեան մէջ նոր էջ մը բացուեցաւ, աշխարհի քաղաքակրթութեան պատճութեան մէջ նոր դարագլուխ մը սկսու և

բովանդակ մարդկութեան առջև վերելքին փրկութեան չիտակ ճամբան հարթուեցաւ:

Անզիփացի ծանօթ եկեղեցական Զարդ Քինկութի կ'րու: «Արքան բարձր է երկինքը, նոյնին բարձր է Քրիստոսի խաչը: Առաջի եւր Քրիստոս բազկատարած խաչուեցաւ անոր վրայ՝ երկինք վար իշու եւ երկի վեր բարձրացաւ: Իսկ ուրիշ Անզիփացի եկեղեցական մը՝ Աւրիելը թամբը, այսպէս կ'արտայայտուիք, «Քրիստոնեութիւնը տանց խաչին կը կորսնցնէ, իր նախակուրիմբը: Քրիստոնէութեան զերակայութիւնը միւս կրօններու վրայ ուրիշ բանի մէջ չի կայանար բայց եթէ Քրիստոսի խաչին և անոր վրայ արտայայտուած Աստուծոյ աստապող սիրոյն մէջ՝ որ մարդոց միրութիւնը ապահովեց:

Դ. — Ի՞նչ պէտք է ըլլայ մեր զիեմբ այս աստապող սիրոյն հանդիպ: — Այս ուղղութեամբ նախ պէտք է նկատի առնենք թէ Յիսուս, մեր փրկիչը, մեզի՝ համար չարչարուեցաւ Գոզգոթայի խաչին վրայ: Մենք մեզանչեցինք՝ բայց ինք պատճուեցաւ, մենք մեր մեզքերով խաչ մը չինեցինք՝ և ինք մեր մեզքին խաչը կրեց: Անրացն անիկա մեր ցաւերը վերցուց եւ մեր վիշտերը իր վրայ առաւ, եւ մենք զանիկա վիրաւուած, Աստուծմէկ զանուած ու շարիբի հանդիպած սեպեցինք: Բայց անիկա մեր մեղք ապրինք: Պէտք է զիմնանք ասիկա սրոշապէս:

Երկրորդ մեր ընելիքն է զնահատել մեզի հանգէստ ցոյց տրուած այս աստապող ու փրկարար սէրը, հետեւելով Յիսուսի հետքերուն: Անիկա կ'ըսէ: «Ան որ կ'ուզի իմ հետեւս զալ, բող իր անձը ուրանայ, եւ իր խաչը վերցնէ ու իմ հետեւս զայ» (Մրկ. Հ. 24): Քրիստոնեայ ըլլալ խաչ կրել ու Քրիստոսի օրինակին հետեւի կը նշանակէ: Պէտք չէ մեր կրած խաչը բռն մը նկատել, այլ պէտք է սիրով տանիլ զայն: Բառ Թագմաս Քէմբացիի, սերէ խաչը շիտակ կերպով տարուի, ոչ թէ մեզի բռն է այլ նեցուկ կը կանչի բայն: Բառ Թագմաս Քէմբացիի, սերէ խաչը շիտակ կերպով տարուի, ոչ թէ մեզի բռն է այլ նեցուկ կը կանչի բայն:

Խաչն ար սովորյն երկու տեսակ է, անձնական և այլասիրական: Եթուառ ոչ մրացն իր անձնական խաչը կրեց, առ կրեց նաև այլասիրական խաչը: Մենք ես ոգտաք է որ սիրով կրենք թէ մեր և թէ որդիշներուն խաչը կրեմէ խուսափի: Քրիստոսի ոչմարդաբան, Անդր որքան ու բիշներու փրկութեան համար կամաւոր զանոզաթիւններ յանձն առնել նոյնքան իր փրկութիւնը ապահոված և Քրիստոսի հետքերուն վրային քալած կ'ըլլաց: Անձն իրական Քրիստոնեայի կեանքին մէջ Պազգեթա մը կայ:

Այժ որ իրեւ Քրիստոնեայ այլասիրական կեանք մը պիտի ապրի: ուրիշներուն օգտակար պիտի ըլլաց, մարզկութեան վերիւրին ու երջանկութեան պիտի նպաստե պէտք է սպառի, պէտք է վատնուի, պէտք է համեն և զանարերուի: Քիսուս այս ճամբարէն քալեց: իւրաքանչիւր ճշմարիտ Քրիստոնեայ հաւատացեալին համար ալ այս է շխտակ ճամբար:

Մեր ընկելիք ուրիշ մէկ բանն ար է Յիշուսի այս տառապող ու փրկարար սիրոյն անջն խոնարհի ու անկէ ներշնչուիլ հազեռապէս: Քանզի այս սիրոյն առջն կա՞յ արգեօք սիրո մը որ չի հալիր: Կո՞յ մեշտառոր մը որ չի զգաստանար, կա՞յ այս աշխարհի հաճոյքներուն գերի եղած անձ մը որ չարբինար, և վերջապէս կա՞յ մեզ քի ծանր բեռան տակ յոզնած ու ընկճուած մէկը որ ապաշխարութեան վրայ չխօրհնը:

Մեզի կը մեայ ուստի հաւատքով մօտենալ Պողոսթայի խաչի պատուանդանին և սիրանալ փրկութեան օրհնութիւններուն: Արքան հարիւրաւոր ու հազարաւոր մարդիկ երկու հազար տարիներէ ի վեր նոյնը ընկելով նորոգուած կեանքի մը արիացած են, վայելելով մտքի կատարեալ անզորութիւն, սրտի կատարեալ խաղաղութիւն և հոգիկան կատարեալ երջանկութիւն: Այդ պէտք չունի տառուածային այս օրհնուաթիւններուն, անհատները, ընտանիքները, ողջինը, կառագարութիւնները, ամէնքս ալ պէտք ունինք և կարօտը կը քաշենք անհնց, որոնք մեզի համար կարելի եղած են տրուիլ չնորհիւ խաչին վրայ Յիսուսի կրած չարչարան քներուն:

ԳՐ. Ա. ԱՍՏՐՈՖԵԼՆ  
Ֆեզիօ, Գալիք.

## ՊԱՅՔԱՐ ԵՒ ՅԱՂԹԱՆԱԿ

Քաջակերպություն, զի և բարեցի աշխարհի (ՅՈՎՀ. ՃԶ. 33):

Տարակայո չկոյ թէ կեանքի մէջ ձեռք բերուած ամէն յաղթանակ ճիզ մը կ'ենթազրէ և որոշ յաջոզութիւն մը կ'ապահովէ ենթակային ու յաճախ նուե անոր անմիջական կամ հետապոր յըջանակին ալ համար: Յաղթանակներ կան սակայն որոնց իրաւուրություն մէջ մէծ զեր կը խազան բախտաց զիազան ամերակիրը, և հետաքարտ նուաճելիքի հարացարութեամբ նուաճելիքի ու իրենքն իր սուսան պարագաներ ու առանց յաղթանակներէն ապահովուած զանանք իրազործադներուն համար:

Բայց ի՞նչն է որ մարդերը կը մզէ պայքարելու այս աշխարհի վրայ, այդ պայքարէն յաղթական կամ պարտուած դուրս գալու համար ի վերջոյ: Աղեանքը պայքարը մըն էն, ըստած է շատ իրաւամբ, ինչպէս նաև սկեանքի մէջ յաղթելէն աւելի պայքարին է կարեւուր վասնզի տառնց պայքարի չկայ յաղթանակ ու առանց յաղթանակի չկայ վարձատրութիւն ու երջանկութիւն:

Ակեանքի պայքարը սակայն ունի իր բազում երեսները: Պայքար կայ կրօնական, քաղաքական, տնտեսական և այլ զեսիններու վրայ: Պայքար՝ արգարութեան ու ճշմարտութեան համար ու նաև անձնական ճղճիր շահերու և հեշտ ու վաղանցուկ վայելքներու ի խողիր: Ու նաև պայքար՝ ճշմարտութեան դէմ, հոգիին դէմ, Աստուածու դոյ դէմ:

Մէծ ճշմարտութիւն մը թաքնուած է մեր պատմութեան մէջ սովորականացած ու հաստատութիւն մէջ թէ ավարգանանք թէ նիւրավիւ պարտուեցան, բայց բարյալիքներին յաղթեցին: Զի, ինչպէս տեսանք, մէկէ աւելի են շահուած յաղթանակները աշխարհի վրայ, ու անոնցմէ աղնուագոյնն ու կարևորությունն է հոգիին տարած յաղ-

թանակը մարմնին ու անոսք խորհրդանշուած աշխարհին վրայ . այլ խօսքով՝ բարօյական ուժերու յաղթանակը նիւթական ուժերու վրայ :

«Ես յաղթեցի աշխարհին : Տարօրինակ պիտի չթռէ՞ր մեզմէ չատերուն այս հառատուամբ առաջին առիթով, ու մեզմէ ո՞վ պիտի չմղուէր հարցնելու խորշն . բայց ինչո՞ւ պայքարիլ աշխարհի գէմ, ու ի՞նչ-պէս յաղթական զարս զալ այդ պայքարէն, երբ զիտենք թէ որքան աղամանդեայ նկարագիրներ ու ամբախարիսին հաւատքներ փշուած են անկանգներիորէն կեանքի աշեղաշառաչ փոթորիկներուն գէմ : Երբ զիտենք թէ Զարը, ոքողուած հազար ու մէկ մոզիչ երեսիթներու վերեւ, գարանակալ կը սպասէ մեր ամէն մէկ քայլափախին, մեզ իր կառքին լծելու, իր գերին դարձնելու համայնակուլ տենչով : Երբ զիտենք թէ ի՞նչ հարզի գժուարութիւններ կը սպասին մեզի նոյն այդ Զարի սոզբանքներուն զիմակալելու, մեր մարդկային տկար ուժերով անոր լէկէ օններուն բիրտ զօրութեան գէմ ճակատելու ազնիւ՝ այլ առաջին առիթով յուսուհատեցուցիչ թուող արարքին : Աւ սխալած չենք ըլլար յաճախու Վասնզի ակներե ու անխուսափելի պիտի ըլլայ պարաւութիւնը եթէ չունենանք մեր հետ զօրութիւնը Ա . Հոգիին, առաքեալին բառերով՝ եթէ հազած չըլլանք չզսպասազինութիւնն Ասուուծոյու : Եթէ չկիրարկենք այն բոլոր միջացները՝ որոնցով Քրիստոս կրցաւ փառաւորապէս յաղթանակը տանիւ աշխարհի վրայ :

Բնական է որ միշտ յաղթելու ակնկալութեամբ մարզ պայքարի ելէ բոլոր այն ուժերուն դէմ՝ որոնք իրեն, կամ, եթէ կարեկից ու բաւի սրտի տէր անհատ մընէ է, իր շուրջիններուն, ազգին կամ մինչեւ իսկ մարզկային մեծ ընտանիքին երջանկութեան ու յառաջիմութեան ճամբուն վրայ խոչընդուած մը իրեն կը կենան : Այսպէս, պայքարազներ եզած են ամէն ժամանակ և ամէն ազգերու մօտ, ազիտութեան գէմ, հիւանդութեանց գէմ, բանապետութեան ու քաղաքական միապետական գարչակարգերու գէմ : Այս բոլորը զովելի ու քաջալերելի են, առկայն այս բոլորէն աւելի ու առաջ հարկ է պայքարիլ աշխարհին գէմ, որմէ

ետք միոյն յաղթանակի լուսափառ ճամբան պիտի բացուի մեր առջե պայքարի վեր յիշեալ մարզերուն մէջ ես :

«Ենդրեցէք նախ զարքայութիւնն Առաւուծոյու ըստ է Քրիստոս, ու անկէ եաք որ մեր միւս պահանջները պիտի զահացուին :

Եթէ սասոյց է որ մարզու միշտ ու միայն կը պայքարի իր թշնամիներուն զէմ ( թշնամին ուրիշ բան չէ բայց եթէ մարմացումը մեզի գէմ զաւող, մեզի չարիք նիւթոզ ուժին ), պէտք չէ մասնաւ սակայն թէ մարզուն մեծապոյն թշնամին իր անձն իսկ, իր սեսը, կամակար ու կամշառ յաճախ, որուն անսանձիլ փափաքներուն որքատ տելու իր առաջին հետ վրայ կու տայ նաև իր ֆիզիքը Աւ պայքարիլ առաջ արտաքին ու անցաւոր ուժերու, թշնամիներու զէմ, հարկ է պայքարիլ մեր մէջ բայց զրած այդ քանզիչ ու ժխտական ուժին զէմ՝ որուն զերը նման է քաղաքական մարզի մէջ ներքին թշնամիի, զաւաճանի դերին, և որ չառաւելի աղիտարեր և որուն յառաջացուցած վտանգը չառ աւելի այժմէ ական ու ճակատագրական է քան արտաքին թշնամիին եկած որեէ հարուած : Աւ առջխարհը, որուն յաղթած ըլլարու փառքը ունեցաւ Յիսուս, խորհրդանիչն է նիւթին ու Զարին զօրութիւններուն հակազրուած հոգիին ու անկէ բխուազ բազմատեսակ առաքինութիւններուն : Զէ՞ որ Յիսուսը փորձող Սատանային իսկ բառերով, աշխարհի ամէն իշխանութիւններն ու փառքերը անոր են արուած ( Ղկա . Դ . 6 ) : Աւ մեր չարականի բառերով, «Ամենայն տուրք բարիք և ամենայն պարզեք կատարեալք ի վերուստ են իշեալք » Այս առընչութեամբ պէտք չէ մասնաւ թէ մարզ արարածը երկու տարբեր էութիւններու բազմակցութեամբ զոյտուուած միութիւն մըն է : Աւ այդ զոյդ էութիւններին միոյն պահանջներուն անտեսումը կը խաթարէ ներգաշնակութիւնը իր զզացումներուն ու կը վրզովէ խաղաղութիւնը իր ներաշխարհին :

Հոգիին . կրնա՞նք անտեսել անոր պահանջները առանց երբեք այցուելու ներքին խոսքի այն վիճակին՝ ուր մեր խոզնին անսուտ ձայնը բոլորքի աղաղակող սաստմը

իրք կը փոթորկէ մեր էսթիւնը : Ամենէն անկրօն իրենք զիրենք անկրօն դաւանագային խոկ չեն կրցած լսեցնել արդարութեան այդ ձայնը :

Ամենքս ալ զիտենք պատմութենէն թէ որքան տեած և ի՞նչ չահ ապահոված է զայն զլուխ հանողներուն ու անսնց անմիշ ջական ըլջապատճն, անզէն ու անմիշ ըլիլոններուն արեան զնոսվ ապահոված յազմանկաները Աղեքսանորի ու ձենկիզ յանի . Էնկիմուրի ու Նաֆուէօնի : Թէ ի՞նչ է եղած կարգ մը երկիրներու մէջ անկրօն ու սկեպտիկ փիլիսոփայութեանց յազմանակէն նոյն այդ երկիրներու ժողովութեան ապահոված բարիքը : Աւ, վերջին հաշուսվ, ի՞նչ է եղած համանքք շատ մը երկիրներու մէջ տղիտութեան կամ ալլազան հիւանդութեանց մանրէներուն զիմ հրաշազան զիւտերով կատարուած յազմանակներուն՝ երբ պակասծ է զօրութիւնն ու կամքը նոյն այդ յաջողութեաններուն իրենց այդ յաջողութեաններուն միացնելու համար նաև օաշխարհիք վրայ տարուած փառաւոր յազմանակը : Առանց որուն ապահովուած միւս յազմանակներն ալ կը թան ենթակայ վատնգուելու, երբ իմ նոյն այդ նուանութերն խոկ արձանագրող ժողովուրգներէն : Վեհայ՝ զոյզ համաշխարհին պատերազմերը, ուր ծաղկեալ քաղաքակրթութիւն մը զոհ զնաց մարդուն անասնային ու անսանձ բնազգներուն :

\* \*

«Ես յազմեցի աշխարհի» :

Ի՞նչ անխառն վատահութիւն ու արդար զանուակութիւն կայ Յիսուսի արտասահած այդ բարերու ետին : Աւ մանաւոնդ . Պազութայի ա՛յնքան մօտալուս ու տրաստ հեռանկարին զիմաց ի՞նչ արիութիւն, որմէ բաժին հանել կը փորձէ Իր աշակերտներուն, և որպի խանգամառել կը ջանայ հոգեոր իրազութիւններու հանգէպ զեսնոր բացուած ու մէծ անակնկալին առջն ընկրկելու ու մինչ խոկ զինք առանձին թողելու, ու բանալու աստիճան վեհերու հոգիները անոց : Բայց քաջ է Ան ու անյողզողզ՝ զիւրագոյն յազմանակը տարած ըլլալու զիւրակցութենէն բխող վատահութեամբ մը : Աւ ի՞նչպէս կրնար այդպէս չըլլալ, յաղթեիէ ետք բավանդակ մարդկային պատմութեան ընթացքին իրրե անլուծելի խոչընդունու ու զերազոյն կնձիս նկատուած Մահ-

ուան : Ալլահուամբ զմահ կոխեաց, աՅազթեաց մահու իշխանութեամբ : Կ'ըսնեն մեր Ու Եկեղեցւ շարականները : Աւ մեր մամագրքին մէջ բազում են ակնարկութիւնները Յիսուսի առարած այս յազմութեանակին» . «Զուոր, զհրաշալի և յալորով յայրուլ, սքանչելագործ քո ...», «Հզօր, յալրուլ, սքանչելագործ այլն» :

«Աշխարհի» վրայ առարուած այդ յազմանակով ապահովուած բարիքներուն անփոխարինելի վայելքը արուեցաւ հետազայ զարիրուն բոլոր աննեց որոնք կրցան հոգեոր այդ պայքարէն, առաքեալին բառերով՝ սրաւուք պատերազմ մէն յազմական զուրուած գուլ :

Պայքարը եթէ բարոյական արքէ քներուն ազնիւ սկզբունքներու համար է մզուած, առանց շահագէտ նպատակներու և սին ու ժամանակաւոր վառքերուն հետապնդման, ուշ կամ կանուխ կը պատկուի յաջողութեամբ : Ե՞նչ վայթ թէ այդ յաջողութեան բարիքները վայելելու առանձնաշնորհումը լիբակուի նոյն այդ պայքարողներու որդիներուն կամ թունորդիներուն : Վարդանանց մզած պայքարով հետապնդուած սրբազան նորանակը յազմանակից աւելի քան երեսնամեակ մը վերջ միայն, ու ամրուզ զարեր պէտք եղան յաջողութեամբ պատկելու համար, օրինակ, իտուացի ու յոյն ժողովուրդներուն քաղաքական անկախութեան ու ազատազրութեան համար անձնութեամբ բար մզած պայքարուները :

Պատմութեան մէջ զանազան յազմանակներով ձեռք բերուած բարիքները անցաւոր եղած են միշտ ու կորնչական : Ա. Բ. Բրիստուի կողմէ աշխարհի վրայու շահաւած յազմանակներն պատւզը եղող Քրիստոնէութիւնը ու միայն կրցած է զոյտանել՝ կուրծք տալով զարերու արհաւրալից փոքրիկներուն, այլև ծաղկած ու ծաւալած թարիկներէ, ընդպարձուկներով իր տիրապետ չարուանակութեամբ սահմանները խուարակուու Ափրիկէի կամ հեռաւոր Զինաստանի խորերը բիկէի զամ հեռաւոր հոգիները մինչեւ ապրող ժողովուրդներուն հոգիները մինչեւ :

Պատմութիւնը չէ արձանագրած տակաւին ու պիտի չարձանագրէ ալ երբեք աւելի մէծ ու փառաւոր յազմանակ մը՝ քան Քրիստուի մահով ու յարձութեամբ նոյն այդ պահուան ու աշխարհի վրայ տարուած հրամակուան աշխարհի վրայ տարուած տակաւի յազմանակը :

Գէմբիդ Ա. Ճինհիշեալ Ա. Ճինհիշեալ

## ՅԵՐԵՒՆԵՐ ՔՈՅԻՆ ՄԵԶ

Ա.

Յառ կայ նոգուս մէջ,  
Եր մօրմէն զատուած տրդու մը նըման,  
Զի երազներու և նըմարտութեան  
Միջէւ կ'երկարի,  
Անարդարութեան բասուերն անսահման,  
Կեանին չափ բասոյգ, մահուան պէս դաման:

Ու փախչիլ կ'ուզեմ,  
Աշխարհէն այս նեղ և մարդերէն զար,  
Որոնք իրենց նիդն բեռն հանոյներոնն,  
Մըրջիններու պէս շալիած նեւ ի նեւ  
Կը տանին այլուր,  
Ուր մահն ու ծընունդ կըրեան ըրփորուի  
Այնքան դիւրութեամբ:

Կեցած եմ այսպէս օրերուն դէմ չար,  
Տըրտում բայց խաղաղ,  
Տերեւ մը ինչպէս բոցերու դիմաց.  
Ինձի կը բըւի թէ ուրցու ու նեռուն,  
Ծովերէն անդին, լիոներու եսին,  
Մարդեւ բարացած խորն անապատին,  
Կը նային ինձի աշերով մահուան:

Բ.

Արդարութիւն, ուշ, զեռ մինչեւ երեկ,  
Բառեր կենդանի,  
Հովերու դիմաց մոմեւ գողդոցուն,  
Եւ մեր օրերու համբուն՝ անսահման,  
Կայաններ էին բաղց ու մըսերիս,  
Հնկերն ու եղբայր:

Անցեալն ինձ նամար գիճի բզզրիսիչ,  
Ու ներկան երգ մը բաղց ու ներդաշնակ,  
Ապագան նընչուն լրուութիւն մ'աղուու:

Կոտրած են նիմա նեցուկներու ամէն,  
Հաւասէ, յոյս ու ուշ,  
Ճրազս ալ չունի բոցն իր երբեմնի,  
Դիշերուան դէմ խոր,  
Սըրտազեղումի, բզմալանիք տեղ,  
Կը նոսի սըրտէս լրուելեայն արիւն:

Ու կ'իջնէ զիեւ,  
Կասին մը ինչպէս աչին անսահման,  
Կը զցուին անմուն վիշերու վրայ  
Դուռ ու պատման:  
Բայց հոգիներուն կը փրուի յանախ  
Երազ մ'անանուն,  
Ծխածան ինչպէս անձեւեներէն վերջ.  
Երբ անդին հոգար տեսներ կը մարին,  
Ճըրազներու պէս հովերու դիմաց,  
Չեռ մը ուկրացած վերմակի տակէն  
Դուրս կը կարկառոի,  
Պըրկուած կեանի դէմ, անզոր և դաժան:

Արեւին ներքեւ մեր այս աշխարհին,  
Փըսուր մը կարօս, բաժակ մը զինի,  
Բիու նիւաններէ կը նեսապրնդուի.  
Աղիբի պայցար, կը բարի ակրայի.  
Արդարութիւն, ուր, խիզն ամենաքառ,  
Բառեր են գատարկ,  
Մեր հոգին ընող ազան, նեղդ ու վաս:

Մարգն այս ապիւրա,  
Որ կարէ արեւին փոխեր է թոյնի,  
Գիտէ պատրաստել խաղողէն զինի,  
Փոխնիլ ջուրն լոյսի, երազն՝ իրափ,  
Թըրամին՝ եղբօր, վիշը՝ ծիծաղի,  
Եւ մահուան դիմաց օրուիլ սիրտն իր  
Գալիբի երգով:

Տակաւին երէկ,  
Աշխարհ հանգելու մոլուցով դրժխնմ,  
Գրսու Աւրանիոմ, Ռատիոմ լուսառող,  
Հյուշն անսարազ և սըլան անմաւ,  
Որ կըրնայ կըրտել անջրապեսն անհուն,  
Հասնիլ ապահով լուսի դուռներուն:

Զարութեան իշխանն մարդն ապերասան,  
Զի զիեւ սակայն,  
Կեանի առեղծուածն, զալտնիբը մահուան,  
Մեր երազներուն վերեւն անսահման  
Դիսկիներով մեր տակուին կ'աղբուին  
Հողերն այս երկրին,  
Բայց չէ սրբուած մեզ զիտնալ բառն յիշին՝  
Մեր հակասագրին:

ԵԳԻՎԱՐԻ

Գ. Ե. Բ. Պ. Ա. Ե. Մ. Ա. Ե. Ի. Հ. Հ. Հ.

ԵՐԱԾՈՒՅՈՒՆ

«ուր բանցկիլ այսօք տեսակիվ յաջմանի ,  
ի մէջ հողեղինաց . արարած՝ Առաջին բաղա-  
նութեան խորհին զխրնուրդ»;

ՀԱՐԱԿԱՆ

Գերսեմանի՛, սրում բաժակ արխանի,  
Այ սիր ձ'անմեղ, երկինքին դէմ թրապոր՝  
Ծունկի ելած՝ անդոհանիով կ'արինի,  
Ասուածալին սիրոյ հազած ձորձ ու տոր:

Գերսեմանի՛, վաս մատութան դա՛ւ, համբոյր.  
Կեղծիքի և ուշացութան անարի  
Դիւելիդ մէջ, զարհուանի մահարոյր  
Առերգութիւն մատունութե՞ն կ'երկարի:

Գերսեմանիք, մուր պարտէզ սե եղեռնի,  
Աւ Աստուած մը, նո՞ր սմանչելիի, երկրասո  
Հոգիներո հայուածքին տակ կը մեռնի  
Եղեռնական, պիյծ համբույրին մէջ անո՞ւ

Արուն համար, պահ մը տռաջ, մեծ խորհուրդ,  
Բարեկամի բացաւ սիրտը տրմասուզ,  
Եւ կարեցուց բաժակին մէջ անյազուրդ,  
Մրցի մասնութ ալլէն պատ մը արտասով:

Գերսեմանի՛, մասու բաժակ՝ մեկուսի  
Չորի մը մէջ, ուր կեանք մ'ահա խորտակուած,  
Խորտակուածոյ զոյզ աչեռով Յիսուսի,  
Յոզիաքալիթ՝ կը պաղասի առ Աստած ...:

Հայր՝ վերէն, Արդունի հակտին՝ մեծ Յոյսին  
Կուտայ համբայրն միացումի, յարութեան,  
Թէ օր մը հոն՝ պիտի ըլլան միասին,  
Ս.նմեննելի՝ յահետեան, յահետեան:

Գերսեմանի՛, մշադալար ձիթենի՛,  
Հոգիներու վրայ կարող յօյի ձեր,  
Երբ օր մը՝ նոր հազնիս փառքը հայրենի,  
Յաքութանի յու մըն այ պահէ մեզի գեր:

Գերսեմանին, որտես պարտէզ ուն նողի:  
Մուր, ահաւոր, մըռայլ խորհուրդ մը թիվսից,  
Յուրքայի հետ պիտի լոյ ու կողկողի  
Երկինքն ի վեր, զարեւու ուն անքարի ըս:

## ՀԱՅՈՅ ԼՈՅԱԿԻ ՓԱՐՈՍ

Վեհ, պատօնական սուրբն ոսկեզօծ  
Պատեան դրեցիր սրով ալեկոծ . . .  
Փոխեցիր պարտն պերն, արքայական,  
Աւ սիրով մար խուզը վաճական:

Համեարեղ ունով Հայոց աշխարհում,  
Երեսան եկար նինջեռող դարում,  
Գիտուոր առաջի նրավառ լոյսով  
Փայլեցիր Հայկեան լեզուն սառեռով:

Հիմնապիր եկար Հայ գպրոցներին,  
Աւ փառու անէչ՝ գիտնականներին,  
Առոնի շահեցին անոն պատուական,  
Աւ վառ պահեցին լոյսիդ վառարան:

Գարար գետի պէս սասմից զարերից  
Քո զործն է հոսում Հայու զրիչից,  
Աւ նո հնարած անման սառեռով,  
Գոհար է բխում զոհար բառերով:

Գու յուեթացրիր Հայկական լեզուն,  
Խնչպէս վառ առաջի ցոլքը ըղողուն,  
Զրողիր ձուլուենի, յաւերծ վերջանան,  
Աւ լոլ պատմական յոււերում մնանի:

Սուրբ Մեսոպոտամին ես դու, մեֆով սրաբի,  
Աւ ընդգրկեցիր պայտան յարասի,  
Աւ զսար Հայոց նոխ, բազմահնչին  
Տառերին ոսկեայ, սառենի զեղագոյնի:

Մ. Գ. ՅԱՐՈՒԹՅՈՒՆԵԱՆ

Կովկաս, 2 Հոկտ. 1961



ՀՈՌՎՄԵԱԿԱՆ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ԳԵՐԱԳՈՅՆ ՃԻԳԸ

Հռոմի մէջ տեղի ունեցած վատիկանի երկրորդ Տիեզերական ժաղավր, ոռ այժմ կարձ գաղաքավ յատաձգուած, պատմութեան մհծագոյն և թերեւ առ ամենէն նշանակուից կրօնական ժաղովն է: Աւելի ապաւորիչ են իր յեզարջող նպաստենիրը քան միջնադարեան փառքը, ի յոյտ հկած իր բացման ատեն, անցհալ Հոկտեմբերին — լրիւ բարեկարգում և վերանորսում Հռովմէական կաթոլիկ եկեղեցւոյ, որ եթէ իրականանայ պիտի ազգէ աշխարհի 500 միլիոն կաթոլիկներու կեանքին ու կարգուսարքին, և ազնիւ հրուէր մը համայն Քրիստոնէութեան, զարերէ ի վեր անջատուած իրարմէ (Պապին բառերով) «որոնելու և գտնելու այն միացնումը, որու համար Յիսուս Քրիստոս այնքան ջերմօրէն խնդրամասոյց եղու իր երկնուոր Հօրը»:

Բաղաքան Բարեկարգութեանէն ի վեր այսքան համարձակ ծրագիր մը չէր առաջարկուած որևէ տեղէ: Տր. Զարլո Մալիք, Խախիկին Խախագան Միացեալ Ազգգերու Ընդհանուր ժաղավր, իրաւունք ունէր ըսկելու այս առիթով, թէ վերայիշեալ «ժաղավր» կրնայ ամենէն կարեւոր գէպքը ըլլու 20րդ դարուն, եթէ ոչ զալիք դարերոււ:

Նկատելի է նախ իր նշանակութիւնը՝ նոյնինքն Հռովմէական կաթոլիկ եկեղեցւոյ համար, որ առկանին կ'ընթանայ հիմնական այն կանոններով որոնք 400 տարի առաջ դրսեցան Թրէնթոյի ժաղավրին մէջ: Պապի գաղաքարավ Եկեղեցին այժմ խաչաձեռուած դիւնազիտութիւնը և մհկանացման սպարացթներով, անտառկէ ներկայ դարու պահանջքին ժաղավրին նողատակն է, ինչպէս կը խօսուի Հռովմէական մէջ գօրեղ խումբեր (բազկացած տառելուրար տարիքնին տառած իստացի կարտինալներէ, յայտնապէս նակառակ փափխութեան), ինչպէս նաև թեմակալներ՝ խառլիխյէն, Ապոնիխյէն, Հարաւայյին և կեղրունական Ամերիկայէն, բարեկարգութեան կարիքը չեն տեսներ Եկեղեցիններու խառլիխյէն 430 հպիսկոպոսներ միայն քաւէարկելու իրաւունք ունին, ընդ հանուուր 2700 դամարին զրոյ:

Այսպիսի պատրաստութիւն մը նկատնի կարգ մը ներքին բարեկարգութիւններ, յիշելու համար քանի մը համար մը այն: Ա) Նուազումը այն կեղրունացման որ ունի վատիկանի կեղրունական վարչական Մարմինը: Բ) Կրճատումը թիւնական սահմաններու և վերաշնուրմը վիճակներու, հակակըռելու համար այն ազերը ուր առաջարկութիւն կայ (ինչպէս լատինիա, ուր 260 թիւնիր կան 48 միլիոն կաթոլիկներու համար), նուազումիւններ (ինչպէս Արեմանիան Գերմանիա, որ 21 վիճակներ ունի միայն 23 միլիոնի համար): Գ) Նախատեսումը կրօնաւորներու առելի լու բաշխման, աւզզելու համար կացութիւններ, ինչպէս Լատին Ամերիկայի ուր իւրաքանչիւր 10,000 հուատացեալներու համար մէջ մէկ կրօնաւոր կայ, բազգասեալով Միացեալ Նահանգներու համար 800 ի համար կայ այդ մէկը: Դ) Պաշտամանց պարզաբանութիւն, հուատացեալներու առելի ըմբռնելի և նշանակալից ընկելու համար զանոնք, նաև արտանութիւն յարմարցնելու մկրտաւթիւնները, ամուսնութիւնները և թաղման կարգերը ահազկան լիզուններու, սպառյալներու և կրօնական կիրառութեանց:

Այս բարեկարգութիւններէն շատերը պիտի մաքրեն ընդդիմութեան կազմակըները: Պապականնութեան մէջ զօրեղ խումբեր (բազկացած տառելուրար տարիքնին տառած իստացի կարտինալներէ, յայտնապէս նակառակ փափխութեան), ինչպէս նաև թեմակալներ՝ խառլիխյէն, Ապոնիխյէն, Հարաւայյին և կեղրունական Ամերիկայէն, բարեկարգութեան կարիքը չեն տեսներ Եկեղեցիններու խառլիխյէն 430 հպիսկոպոսներ միայն քաւէարկելու իրաւունք ունին, ընդ հանուուր 2700 դամարին զրոյ:

Աւանդութաններու գեմ շարուած կը մաս յառաջդիմականներու խումբը, 400ի չափ: Յառաջդիմականները կաւգան գրւառարար Հերսիսէն, ուր Բոզքափական Բարեկարգութիւնը սկսու — Գերմանիային, Աւստրիայէն, Զառլիցիայէն, Ֆրանսիայէն, Պելզիքայէն, Բրիտանիայէն, Արանտինաւիայէն: «Յոյց պիտի տառնք թէ բարեկարգութիւնը միայն Բոզքափականներուն յառաւկ չէ», ըստէ չէկը: Երկու կողմին միջին, հաւասարակառութիւնը պահողներ պիտի ըլլան թերեւ Միացիալ Նահանգներու 240 թեմակալները:

Այս պարագային ի՞նչ պիտի ըլլայ դիրքը Պապին, որուն կ'ինսայ գերտպոյն սրբումը ժողովական բոլոր տառջարկաւմնաց: Իր՝ Եկեղեցին այժմէականացնելու դիաստրութիւնը, զինք կը դառէ բարեկարգիչներու կարգին: Ժողովական երեք տարրուան բուռն պատրաստութեանց ըքչանին, ինք պնդեց որ օրակարգի վրայ դրախին այն բոլոր գլխաւոր նիւթերը սրանք կը յուղէին կոթոլիկ (և նոյնիսկ ոչ կոթոլիկ) խիզձը: Իր Յունիո 1959ի Ըստհանրական Թուղթին սկսելով՝ Պապը հանչգաւած է սրովէս ջատագավը ազատ արտայրառութիւններու: ինք արգէք կը աւանէ «զանազան գոզափարներու բազառութիւններու առաջ:

Միծ Հայրապետին ամենէն աւելի յիշապնդած նովատուկն է Կոթոլիկներու և ոչ կոթոլիկներու միջին բարեկամական և դարձուցական կլիմայ մը ստեղծել, որ պիտի յանդի ի վերջոյ բոլոր քրիստոնէաթեան վերջ իր առաջին գործերէն մին հզար ստեղծել Քարտուզարութիւն մը Քրիստոնէաններու Միութեան: Քարտուզարութեան աւ պատուխանառաւ կարգեց Եկեղեցւայ ամենէն հրապարերէ անձնուարութիւններէն մին, կարտինալ Օկուսթին Պէտ, շատ գորգացած Գերման ծագումով Յիսուսին մը:

Իր ընտրութենէն ի վեր գրեթէ բոլոր չրագրակայշին խօսքերուն մէջ, Յովհաննէս իդ. Պապը շեշտած է որ Եկեղեցացական բարեկարգութեան և վերանորոգման գլխաւոր նովատուկներէն մին պիտի

ըլլայ անհետացնել արգելքները կաթուլիկեցւոյ և իր անջատուած ՀՅրիուտոններու եղբայրներուն միջեւ: 28 Յոզուքան և Արևելիան Օրթոսոքս Հյուտուածուութեանը բարեկարգութեան իր խօսքին մէջ, ժողովականներու ուղղաւած, Պապը տկնյայտնի զգացումով մը ըստու «կը մխիթարուիմ ձեր ներկայութենէն: Որպիս մէջ կ'այրի փափաքը աշխատելու և տանջուելու՝ մօտեցնելու համար այն ժամը, երբ բոլոր մարգկանց համար Յիսուսի ազօթքը Վերջին Ընթրիքին (որ իրենք բոլորն ալ մի ըլլան) իր կատարման հասնիւ»:

Քրիստոնէական միացման մզումը տրադիւնքը չէ, ինչպէս Պապը ըստու, անձի մը փափաքին: Հոսքմէական Կաթոլիկ Եկեղեցին յայտնազէս կը դանուի ուլիքի մը վրայ որ կը բարձրանայ տասնեսկ տարիներէ ի վեր, և շատ մը կազմերէ: Հոսանքը ամենէն աւելի երեան հկած է Բոզքափականութենէն ներս, ուր անջատման զգացումը այլևս թառամազ երեայթի մը կիրարանքը առած է:

Միացիալ Նահանգներու մէջ մանուսնդ, ոչ միայն շատ քննութաստած առզանգներու բազմապատճենումը զարգած է, այլև նախազէս անջատաւած Եկեղեցիներու մէջ այժմ ճիգ կայ համախմբելու նոյն սկզբնին շարքը, Միացիալ Նահանգներու Բազմաքանութեան ընդհանուր թիւին (մօտ 64 միլիոն) մօտ 30 առ հարիւրը կը պատկանին նախազէս անջատաւած և յիշտոյ միացած, կամ յարանուանական գիծի վրայ միացման վրայ հղող խումբերու: Ներկայիս ամենէն աւելի խօսուած ու ցանկացուած միաւորսումը Միացիալ Երիշական, Միեխատական, Բազուքական Հպիսուակուն և Միացիալ Եկեղեցի Քրիստոսի խումբերուն է, Միացիալ Եկեղեցի Քրիստոսի ինքնին ըլլալով միութիւնը Աւետարանականներու և Բարեկարգուածներու՝ Փազավականներու հետ:

Աւելի աչքառու հզար հն Բազուքական միութիւնները այլ երկիրներու մէջ, ինչպէս Պանտայի, Գերմանիայ, Հնդկաստանի, Ճափանի, Ֆիլիփիան կզզիներու, ինտանէզիս, Երկիրիայ, Պանայի և Բանահայոյ: Իսկ Բազուքական բալոր շարժումը

ներէն «բացահայցութիւնէ ի մերձեցում», ամենէն ազաւարիչը եղած է Համաշխարհային եկեղեցեաց իսրաւելով ի կազմումը: Պաշտօնագէս կազմակերպուած մօտ 15 տարի առաջ, «Աշխարհը շատ զօրուոր է բաժանուած եկեղեցւոյ մը համար» նշանաբանվ, Հեթք իր ընկերացին կազմակերպութիւնն մէջ քաշու է 90 երկիրներէ 201 եկեղեցական մարմիններ՝ 300 միլիոն բազոքական և Օրթոսոքս անհատներ ներկայացնող:

Կաթոլիկ տիեզերականները բացարձագէս կը յայտարարեն թէ Բազոքականութեան այս ձգուամը «արոշ ազգեցաւթիւն է զործու իրենց իրար զուր բարձունքը խորացնելուն և կեդրանացնելուն մէջ»: Աւելի կաթոլիկ խումբեր զոյւթիւն առած են ամէն տիեզեր Քրիստոնեաներու միջև լուսայն յարաբերութեանց համար աշխատելու, ինչպէս Միութիւնականները, Միացման Եզրայրները, և Մի Առըր շարժուամը Գերմանիոյ մէջ: Մանթրէալի Կորարինուլ Բուլիմիլէմէջ վիրջերս ըստ որ «իրար զուր ընդհանուր կամք մը երեսն կաւգոյ երկաստիք»:

Տակու կաթոլիկ ասաւածածարաններ կը հրաւիրուին խօսելու բազոքական անկենդիրներու, և բազոքականներ ալ կաթոլիկներու: Արևմահան Եւրոպայի մէջ կաթոլիկ-բազոքական «տիեզերական աշխատողներ» բազմութիւն են: Եւ նոյնիսկ Միացեալ Նահանգոց մէջ, ուր այսպիսի փոխանակութեանց պաշտօնական քաջութեանքը թեթե է եղած, երկու գումանանքէ Սուրբ Գրական աւանդողներ բաժնու ան ահսութիւններ, և ասաւածածարաններ փախանակած կարծիքներ:

Նմոն բար իկամհեցազութիւններ ոչ միայն պատճառ եղած են հին թշնամութեանց անհամացման, այլև ցայց տաւոծ թէ երկու գումանանքները իրարու որքոն մօտեցած են: Տր. Հանս Քաւնիկ, Գերմանիոյ թուազինէն համալսարանի Աստուածարանութեան կաթոլիկ փրաֆէսէօրը, իր «Փազովը, Բարեկարգութիւն և Միութիւն» դրքին մէջ գրած է թէ «Տակու զիրար աւելի լու ձանչցող կաթոլիկներ ու բազոքականներ, զարմանքով զգացած են թէ որ աստիճան, հակառակ իրենց

տակութիւն զոյւթիւն անհցազ տարրիք թեանց, իրարու կը նմանին»:

Իր ազարցոյց, Քաւնիկ կը նչէ զարցող ակնածանք մը կաթոլիկ եկեղեցին ներս Ա. Գրաց համար, շարք մը բազական օրնիերգութեանց որդեկրաւը նշանակելի նուազումը հակա-բազմական զգացմանց, կաթոլիկ ասաւածածարաններու միջև ասրածուն վիճարանութիւն «Բուլը հուատացեալներու կղերը» զաւաննքին, և ամենէն աւելի, կաթոլիկ զաւանամը Բազոքական Բարեկարգութեան որպէս կրօնական երեսյթ մը:

Յավհաննէս իդ. ինք սրաշաղրից ժաղավի նկարագիրը, իր ըստ Համբէմական թիօներու կղերին Փազովի բացումն քի տաւաջ: «Չենք փափաքիր ուեէ մէկը զամականչել, պիտի չփարձենք հաստատել թով իրաւունք աւելի և ով սխալ էր: Պատասխանաւութիւնը բաժնուած է: Կ փափաքիրն քի միայն ըսիէլ, «իրար զանք վիրջ գնենք միար միար բաժնուածմիներուն»»:

Փազովին մէջ ցարդ արամագրութիւն է եղած խուսափելու կարգ մը կաթոլիկ վիճելի մատծութիւններէ և սովորութիւններէ: Արունք խոսվութիւն կը պատճառեն իրենց առնչասուած եզրայրները ուն, ինչպէս օրինակ՝ կաթոլիկ անթիքիլի կանոնները խոսն ամուսնութեանց մասին: Զօրաւոր կերպավ տաւաջ կը ասրուին նուև ոչ կաթոլիկներու համար մատնաւոր ասրագութիւն անհցազ համեստ կանոնները՝ կարդ մը նոր վճիռներ կրօնականներուն մասին, Ապօնիսյ պիս ծանրութիւններով, ուր բազոքական փաքրամանութեանց հանգէտ զիջողութիւնը նշանակելի չէ եղած: Պարզաբանութիւն մը հին մատցութեան «Կաթոլիկի Եկեղեցին ցաւը չիք փրկութիւնն»: և աշխարհականներու զոյսիվիճակին, զիրին ապատախանութեանութեան բարձրացումին:

Բայց «Ժիացում», այնպէս ինչպէտ կաթոլիկները կը համեստն զայն, կը նախատեսէ Կազմակերպչական Ախուրին Համբէ և պատմական հազինականութեան ներքեւ, և Յավհաննէս Պազը կասկած չի թագուր այլ մասին: Իր հետեանք, խոչսր խափանիք արգելքներ կը բարձրանան, իր ուզբուի միութեան մասին խօսուի:

Մասնաւորաբար գֆումը են կաթոլիկ ոյն սովորոյթները և ժտածումները ուղանք անյեղաշրջելի են, գաւանաբանաւուն զհանի վրայ հաստատուած ըլլանուն առար — օրինակ՝ ուժեղ չեշտը զար կաթոլիկ եկեղեցին կը զնէ Ո. Կոյս Մարիամի պաշտամուն մէջ։ Բազոքականներու ամար, Մարիմականութեան այս պաշտամունքը, սուրբերու չափազանցուած յարգանքին համ, կը նուազեցնէ Քրիստոսի դիրքը։

Աւելի գմւուր է Պապին անսխալականութեան և գերակայութեան գտաւնանը, որ սրաշուեցու 1870ին։ Թուրքիոյ Յունաց Աթենակորսոս Պատրիարքը խօսելով Աթենեան Օրթոսոսքո եկեղեցիներու կողմէ, համարձակօրէն ըստու որ Հռոմէական կաթոլիկներու յօժուրակամութիւնը պապականութեան համար նուազած գերի մը ընդունումուն մտաին շառաջին քայլը պատի ըլլայ դէպի միացում Քրիստոնէից միջեւ։ Բազոքականներու դիրքը ընդհանուր առամմը Քէնթը ըրպերի Արքեպիսկոպոսին կողմէ արուեցու վերջերս։ «Ես պատի յօժուրէի ընդունի Պապը սրպէս նոխազան եպիսկոպոս, «տառաջինն ի հաւատոր», բայց ոչ սրպէս անսխալական»։

Ցառաջդիմակուն համազումի տառաջնորդներ չեն խնայեր այսպիսի խոչշնորհաները զորպի տակ զնիւոււ։ Ատոր անգ, անոնք կը կեղրանանան միացումի և զորձակցութեան այնպիսի ձեերու վրայ, իրագործելի են մօտիկ պատկուին, եթէ երկուսահք Քրիստոնէական

ոգի ցոյց տրուի։ Շեշտելով թէ ինչ պիտի նշանակէ եթէ 900 միլիոն Քրիստոնեաններ կատարելապէս միացած ըլլան հիւլէտկան զէնքերու, զինաթափման և խաղաղութեան հարցերու շուրջ, կարտինու Պէտ ցոյց կուտայ ընկերային աշխատանքը, միսիոնարական գործունէութիւնը, ընտանիկան և աշխարհական կհանքը, ուր գործոն գործակցութիւնը կրնոյ հսկայ արդիւնքներ ապահովել։

Թէ տակէ անդին միացումը ո՞ր տատիշան կրնոյ երթու, կաթոլիկ տիեզերականները համաձայն են Աստուծոյ ձգելու Մինչ այն, Ժաղովին մէջ յառաջդիմականները կ'ըսն թէ բարեկարգական մեծ շարժումներ կան որոնք պէտք է ըլլան նախքան միացումի որևէ խօսակցութիւն։

«Պատիկ գործերով չենք կրնոր բաւկանանալ, այսօր վերանորոգումը մեծ գործերու կը կարօտի։ Ժաղովը մեզի չի կրնոր ամբովզ ճամբան տանիւ դէպի վերամիացում։ Բայց եթէ անիկո մեծ յաւսափառութիւն մը պիտի ըլլայ իրագործումը մեծ յայսի մը, այն տանին անիկա զմեզ պէտք է խուզը քայլ մը տառաջ տանիւ։

«Գլխաւոր նկատումը այն չէ թէ մենք աւելի լու պիտի գիտուինք Բազոքականներու կամ Օրթոսոքոներու աշքերով, այլ թէ աւելի լու պիտի գիտուինք յաչումիք Ցիսուի Քրիստոնիւթիւն։

Հայոցոց  
ՅՈՎՈՒԿ ՎՐԴԻ. ՄԱՄՈՒԻՐ



## ԲԱՆԱԿԻՐԱԿԵՐ

### ԱՍԱՐ ՍԵՐԱՍՏԱՑԻ

Ասար Աերաստացիքին մասին եղած  
են այլեալի զրադեր, ինչպէս.

1. — Հ. Արակն Առ քրեան, Պատմութիւն Հայ Բժշկութեան, Բազմավէլու, 1881, էջ 33-37:

2. — Հ. Գենդ Յովեանեան, Հետազօտութիւնք Նախնեաց Անդրադենի վրայ, Վիճակ, 1897, էջ 448-517:

3. — Ա. Յ. Բառաջեան, Ասար Աերաստացիք Բժշկութեանը, Հայ Մշտկութիւնը, Փարիզ, 1932, էջ 76-80:

Մենք այսուհետ սիստ Ներկարացնեանք Ասար Աերաստացին իրեն Գրիչ:

Նախ տեսնենք իր անունով մեզի ծանօթ յիշտակարանները:

Ա. — Թի., 1618. — Զեռազիր Ա. Յ.  
Թիւ 743, Ժաղավածոյ, Կոտրազիր:

1. — Թի., 1ր. — Խրատք զեզեցկայարձար և առակաւոր բանիք ք առացեալ յիշտականոցն պէսուին և ազգի ազգի կերպարանոք, խօսել ի զէպ ժամու, ի հոգեարն և ի մարմաւորն, ի չահ և յօդառնեանք ուսումնատէր անձանց, զօր ի բազում և այլ և այլ օրինակաց ժաղավարակ եղաք առաւ: Բայ որք ընթեռնուք ի միսիթարական խրատուց կարդաւով կամ օրինակելով, յիշեցէք զ հաւառքով բանիցու, զյոգնամենք և զանիմասած առաջո Ասար Աերաստացիս, և Ասուած ողորմի առացէք, զի թողցէ Տէր զրազում յանցանու մեր, նոյն և զիշեզացզ, և պարզեցէ զիւր առաւ ողորմութիւնն, ամէն և եղիցի եղիցի (Ցուցակ Զեռ, Երաստղէմի, Համար Զ., էջ 42-3, ընդ ժամկետ):

2. — Թի., 42ր. — Ազ ընթերցուք յիշեցէք զԱերաստացի Ասար ծառայու և Ասուած ողորմի առացէք (նոյն, էջ 43):

3. — Թի., 55ր. — Անէ թվին Հայոց զրեցաւ բանքու ի քաղաքն ելով: Ազ բանիքուն ընթերցուք, զզծուու յիշեցէք, և աղաւանացն և անարհասութեան զրիս անմեղազիր Երատք, զի կար մեր այս էք, այլ աղաւեմ յիշել միով Տէր ողորմացիւ (նոյն, անդ):

4. — Թի., 105մ. — Ազաշեմ զընթերցուք ներաւ ներաւ մեր յազգիր յազնամեն անձական Աերաստացոյս, և անմեղազի լինել ողուանացն, և Տէրն ամհնայի և ձեզ առ հասարակ ողորմացին (նոյն, անդ):

5. — Թի., 109ր. — Նոյն և յազնամեն անիմաստ զրչիս Ասար Աերաստացուն (նոյն, անդ):

6. — Թի., 121մ. — Ազ բանիքուն ը

թերցուքը, անմեղազիր լիրուք ողորմանիս, զի զրիս անցու խօսու ժխորում:

և միսու ի վատանզի էք, այլ յիշեցէք և ձ

զաց թազութիւն առացէք (նոյն, էջ 44):

7. — Թի., 125մ. —  
